ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի կարիքների համար «ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Ոսկետափ բնակավայրի այգու բարեկարգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-25/03»ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Վեդի

«24» սեպտեմբերի 2025թ.
Ժամը՝11⁰⁰

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ) | Ռ.Հակոբյան |
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Ա.Ավետիսյան Մ.Պետրոսյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Ա.Մաթևոսյան,Ա.Սաքանյան |
| Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Ա. Հակոբյան |

«ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-25/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին:
2.Տեղեկություն հայտերի շտկման մասին:
3.Տեղեկատվություն ընթացակարգի հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների վերաբերյալ:
4.Հանձնաժողովի կայացրած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

**1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

**2.Արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ:**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 526-Ն որոշման 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:
Մասնակիցները 2025թվականի սեպտեմբերի 22-ին պատշաճ ծանուցվել են հայտով ներկայացված փաստաթղթերի հրավերի պահանջների անհամապատասխանության մասին:
Մասնակիցները ծանուցվել են armeps.am ոչ ավտոմատ ծանուցմամբ:Մասնակիցները 2025թվականի սեպտեմբերի 23-ին ներկայացրել են անհամապատասխանությունների շտկված տարբերակը՝ գնահատող հանձնաժողովի vedihamaynq.gnumner@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին և մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

**3.Տեղեկատվություն ընթացակարգի հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների վերաբերյալ:**

«ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-25/03»ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 526-Ն որոշման 42-րդ կետով մասնակիցների հայտերը գնահատել բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. « Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետով և ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետով «Միկարտ Շին » ՍՊ ընկերությունը հայտարարվել է ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.24 կետը՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

4.Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.25 կետը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացույցային օր:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

5.Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածներով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձ. նախագահ՝ _____ Ռ.Հակոբյան

Անդամներ՝ _____ Ա.Ավետիսյան

_____ Մ.Պետրոսյան

_____ Ա.Մաթևոսյան

_____ Ա.Սաքանյան

Քարտուղար՝ _____ Ա. Հակոբյան